

ՆԱԽԱՀԱՅՐԵՆԻՔԻ, ԺՈՂՈՎՐԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ
ԵՎ ՈՒՐԱՐՏՈՒԻ ՄԱՍԻՆ

ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Խ. ՍԱՐԳՍՅԱՆ

Վերջին ժամանակներս մի շարք արագագիր հեղինակներ (Ս. Այվազյան, Ռ. Իշխանյան, Բ. Ուլուբաբյան և ուրիշներ) այնպիսի ավերածություններ են գործել հողվածիս վերնագրում նշված գիտական խնդիրների մեկնաբանման բնագավառում, որ անհրաժեշտ է դարձել կրկին անգամ (տե՛ս մեր «Հիմնադրուկ տեսությունների Ուրարտուի մասին» հոդվածը, «Պատմա-բանասիրական հանդես», 1970, № 3) շահագրգիռ և պատմական ճշմարտությանը ծառայի հասարակայնությանը մատուցել մի քանի գիտական տեղեկություններ։ Որոնք որոշ գրվածքների և հեռուստատեսային հաղորդումների ազդեցության ներքո կամ «մոռացության» են տրվում, կամ էլ գլխավայր ներկայացվում։

1. Նախահայրենիքի խնդիրը։ «Նախահայրենիք» հասկացությունը լեզվաբանները բխեցնում են «նախալեզու» հասկացությունից և, այսպիսով, նաև և առաջ հարց է ծագում, թե ինչ բան է նախալեզուն։ Աշխարհի ժողովուրդները խոսում են տարբեր լեզուներով։ Դրանք քերականական հատկանիշներով դասակարգելիս ի հայտ են գալիս մի շարք խմբեր։ Այդպիսի խումբերը կոչվում են լեզվաընտանիքներ։ Մեզ քաջ հայտնի հնդեվրոպական լեզվաընտանիքի կողքին գոյություն ունեն, օրինակ, աֆրասիական (սեմաքամիտական), ալթայան, ուգրոֆիննական և այլ լեզվաընտանիքներ։ Միևնույն լեզվաընտանիքին պատկանող լեզուներ կրող ժողովուրդները միշտ չէ, որ կողք կողքի են բնակվում։ Նրանք ցրված են աշխարհով մեկ և ընդմիջվում են այլ լեզվաընտանիքների լեզուների ներկայացուցիչների տարածքներով։ Այսպես, հնդեվրոպական լեզուներ կրող ժողովուրդները ցրված են, ինչպես ցույց է տալիս հենց լեզվաընտանիքի անվանումը, Ասիայում, Եվրոպայում և այլուր։ Նաև Ամերիկայում։ Եթե օրինակ պատկեր են ներկայացնում նաև ուրիշ լեզվաընտանիքների լեզուներ կրող ժողովուրդները։

Լեզվաընտանիքների բաժանվում են լեզվախմբերի կամ լեզվաճյուղերի, որոնցում միավորված են քերականական հատկանիշներով իրար առանձնապես մոտ կանգնած լեզուները։ Այսպես, օրինակ, հնդեվրոպական լեզվաընտանիքը բաղկանում է իրանական, սլավոնական, գերմանական և այլ լեզվաճյուղերից, որոնցից յուրաքանչյուրն արդեն պարունակում է կոնկրետ լեզուների մի խումբ։

Արդ, տվյալ լեզվաընտանիքին պատկանող լեզուների փոխադարձ հարաբառության հանգամանքից ծագել է այդ ընտանիքի նախալեզվի կամ հիմն-լեզվի երբեմնի գոյության մասին եզրակացությունը և տեսականորեն վերականգնվել նրա պատկերը, հիմք ունենալով ինչպես այսօր գոյություն ունեցող և խոսվող լեզուների, այնպես էլ մեռյալ, քայքայված հուշարձաններով վկայված լեզուների փոխադարձաբար համընկնող (այսինքն կամ նմանվող, կամ էլ օրինաչափորեն տարբերվող) տարրերը։ Այդ նախալեզվից կամ հիմն-լեզվից են, ըստ լեզվաբանների համոզմունքի, ճյուղավորվել կոնկրետ գոյություն ունեցած կամ գոյություն ունեցող լեզուները, որոնք, առաջին, ճյուղավորվելուց հետո ապրել են իրենց սեփական կյանքով, ունեցել իրենց ուրույն զարգացումը, որով և բացատրվում են նրանց այսօրվա իրար նկատմամբ ունեցած տարբերությունները։

Այժմ նախահայրենիքի մասին, նախալեզուն կամ հիմք-լեզուն իր գոյության ժամանակ պիտի կենդանի կրողներ ունենար: Վերջիններս էլ պիտի ունենային իրենց բնակության կոնկրետ տարածքը: Հենց այդ տարածքն էլ կոչում են տվյալ հիմք-լեզվի կրողների հայրենիք կամ նրանից ճյուղավորված լեզուների կրողների նախաճառքներ, ի տարբերություն վերջիններիս պատմական կամ ներկա բնակատարածքից, որը կոչվում է ճառքներ:

Արդ, ո՞րն է եղել հնդեվրոպական հիմք-լեզվի կրողների նախահայրենիքը: Այդ խնդիրը քննարկվել է դեռևս XIX դարի սկզբներից և մինչև այժմ էլ շարունակում է քննարկվել: Լեզվաբանները նախապես մտածում էին Հնդկաստանի մասին, այնուհետև Կենտրոնական, հետո՝ Միջին Ասիայի: Ապա նախահայրենիքը, շարժվելով ուսական տափաստանների վրայով անցել է Կենտրոնական Եվրոպա, հետո քաղական ներկար ժամանակ հաստատուն խարխալ ձգել և այժմ էլ՝ հնդեվրոպաբանների մեծամասնության կարծիքով ձգած ունի հարավ-արևելյան Եվրոպայում, Բալկաններում: Սակայն վերջին ժամանակներս տեղաշարժը վերսկսվել է ու տեսակետ հասունացել, թե այդ հայրենիքը գտնվել է Առաջավոր Ասիայում՝ Փոքր Ասիայից մինչև Իրանական սարահարթ ընդգրկող տարածքում, ներառելով Հայկական լեռնաշխարհը:

Պետք է ասել, որ մասնագետներն այս կամ այն երկրամասի՝ որպես հնդեվրոպական նախահայրենիքի վերաբերյալ իրենց եզրակացությունները հանելիս ելնում են մոտավորապես միևնույն սկզբունքներից: Դրանք հետևյալներն են. ենթադրյալ նախահայրենիքի տարածքում գոյություն ունեցած կամ գոյություն ունեցող լեզուների արխայկության (այսինքն՝ հիմք-լեզվի առավել շատ հատկություններ պահպանելու) աստիճանը, հիմք-լեզվի պարունակած՝ բնական և կենդանական ու բուսական աշխարհներին վերաբերող տերմինաբանության, այլև սոցիալական տերմինաբանության՝ տվյալ վայրի բնական-պատմական (հնագիտորեն բացահայտվող) պայմաններին համապատասխանելու հանգամանքները, վերջապես, տվյալ տարածքում գտնվելու դեպքում, այլ լեզվաբանականների հիմք-լեզուների հետ շփման հետևանքներին առկայությունը ու գնահատումը և այլն: Այսուհանդերձ, չափանիշների համընկնումը չի հանգեցրել եզրահանգումների համընկնելուն. յուրաքանչյուր տեսակետի շատագույն գտնում է, որ այդ չափանիշները առավել պերճախոս են իր նախընտրած տարածքի վերաբերյալ:

Այսպիսով, սույն հպանցիկ ակնարկից էլ երևում է, որ բացարձակ երաշխիք չի կարող լինել, թե գիտության մեջ հնդեվրոպական նախահայրենիքի տեղափոխման այն ծիրը, որը ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ շարժվելով այժմ հասել է Առաջավոր Ասիային, չի շարունակի իր ընթացքը այս կամ այն կողմ: Պարզ է դառնում նաև, որ անհամեմատ ավելի դյուրին է, թեև ենթադրաբար, բայց որոշակիորեն վերաստեղծել տվյալ լեզվաբանականի հիմք-լեզվի բերականական տեսքը, քան տեղագրել սրա կրողներին քարտեզի վրա: Այստեղ լրացուցիչ բարդություններ են հարուցում նաև այսպես կոչված լեզվական միությունների կամ արեալային տեսությունը (որի վրա շարժն այստեղ կանգ առնել) և, հատկապես, նոստրատիկ («մերային» լեզուների) տեսությունը: Վերջինս գնալով ամրապնդվում է, առաջարկելով միավորել մի շարք լեզվաբանականի մեկ գերլեզվաբանություն մեջ, որը գոյություն պիտի ունեցած լինի նախալեզուներից հազարամյակներ առաջ և տեղավորված լինի մի նախաճառքներում՝ աշխարհագրական որևէ տարածքում:

Խոսքս այն է, որ նախահայրենիքի աշխարհագրական տեղադրման խնդիրը այնքան պարզ ու որոշ չի ներկայանում լեզվաբաններին (մասնավորապես նաև, ինչպես կտեսնենք, Առաջավոր Ասիայում այն տեղադրելու տեսակետի բուն հեղինակներին) որքան մեր արագագիր հեղինակներին («նորագույն լեզվաբանությունը», գրում է Ռ. Իշխանյանը, — մաթեմատիկական ճշտությամբ որոշեց նաև այդ մայր հայրենիքի տեղը: «Պատկերազարդ պատ-

մություն հայոց», Երևան, 1989, էջ 12) և, նրանց արտակարգ ջանքերի շնորհիվ, մեր հասարակայնության այն մասին, որը իր տեղեկությունները քաղում է միայն ու միայն վերոհիշյալների գրվածքներից ու ելույթներից: Այլև ոչ մի ժողովրդի լուրջ պատմագրություն չի կառուցում նախահայրենիքի խնդրի այս կամ այն լուծումից, չի ստորադասում դրան իր ժողովրդի կազմավորման, նրա հայրենիքի և նրա հետագա զարգացման խնդիրները, այսինքն չի ենթարկում դրանց գիտական հետազոտման բախտը դեռևս լուծում չստացած (գուցե և անլուծելի) գիտական պրոբլեմներին: Այս առումով կարելի է գուգահեռ անցկացնել երկրաշարժերի տեղի, ժամանակի և ուժգնության ճշգրիտ կանխատեսման մեղ այնքան մոտ դարձած խնդրի հետ: Պետք է աշխատել դրա լուծման վրա, հնարավորին չափ մասնակցել դրա լուծմանը, բայց երբեք չպետք է կապել դրա հետ մեր առօրյա խնդիրները՝ նոր, ամրակուռ շինարարության իրականացումը և հին կառույցների անհրաժեշտ ամրապնդումը:

2. «Եկվորոյան» խնդիրը: Թե ինչու՞ այդ բառը շակերտների մեջ ենթառնում, կարգվի հաջորդ տողերից: Դիցուք, գիտությունը որոշել է, թե հնդեվրոպացիների նախահայրենիքը գտնվել է Հնդկաստանում: Դա կնշանակեր, հետևելով մեր արագագիր հեղինակների տրամաբանությանը, որ բոլոր այն հնդեվրոպական լեզուների կրողները, որոնք Հնդկաստանից դուրս են ապրում, այսպես ասած, «եկվոր» են: Այսպես, գերմանացիները և գերմանական լեզվաճյուղին պատկանող ժողովուրդները «եկվոր» են բուն Գերմանիայում, Անգլիայում, Սկանդինավիայի երկրներում: Սլավոնները «եկվոր» են բուն Ռուսիայում, Հեհաստանում, Չեխիայում և այլուր: Պարսիկները «եկվոր» են Պարսկաստանում, հույները՝ Հունաստանում, հայերն էլ՝ Հայաստանում և այլն: Այժմ ենթադրենք, թե նախահայրենիքի տեղը որոշվել է, ընդհանրապես, Կենտրոնական Եվրոպայում: Այս էլ կնշանակեր, որ թվարկածների հետ միասին «եկվոր» են նաև հնդիկները՝ Հնդկաստանում: Իսկ եթե նախահայրենիքը դնենք Առաջավոր Ասիայում, ապա «եկվորություն» իմաստով հնդիկներին կմիանան նաև գերմանացիները՝ Գերմանիայում:

Արդյո՞ք սա անհեթեթություն չէ: Ո՞վ կարող է պնդել, բացի հատուկ նպատակներ հետապնդող շարամիտներից, կամ ո՞ւմ մտքով կարող է անցնել, թե գերմանացի ժողովուրդը Գերմանիայում «եկվոր» է, թե պարսիկները Պարսկաստանում են «եկվոր», հնդիկներն էլ՝ Հնդկաստանում, այն հիմքով, որ 1—6 հազար տարի առաջ նրանց լեզուներն ու նրանց փոքրաթիվ կրողները՝ իրենց նախնական վիճակով, պոկվելով հիմք լեզվից ու ճախաճայրենիքից եկել-տեղավորվել են յուրաքանչյուրն իր պատմական հայրենիքում, այստեղ դարձել իսկական ժողովուրդ (թե ինչպե՞ս՝ տես ստորև) ու շարունակել սարել իրենց պատմական կյանքով: Նույնպես և հայերը Հայաստանում «եկվոր» չեն նաև այն դեպքում, եթե մասնագետները գտնեն, որ նախահայրենիքը ինչ-որ մի այլ տեղ է, և ոչ՝ Առաջավոր Ասիայում: Մեր արագագիր հեղինակները շփոթում են «ճախաճայրենիք» և «հայրենիք» արմատապես տարբեր հասկացություններ:

Կարող են, և իրավացիորեն, հարց տալ: Ի՞նչ է, «եկվոր» բառը պետք է դուրս բերել պատմական խնդիրներ արծարծելիս: Իհարկե, ոչ: Միայն պետք է հանել շակերտները, և օգտագործել այն իսկական իմաստով: Եկվոր են Մերձավոր և Միջին Արևելքում թուրքալեզու ժողովուրդները, Եվրոպայում՝ հունգարները: Իսկ ինչու՞ սրանք եկվոր են, նրանք՝ ոչ: Այն պատճառով, որ սրանց գալստյան պահերին համապատասխան երկրամասերում արդեն տեղական ժողովուրդներ էին կազմավորվել և այդ եկվորները կամ ոչնչացնում, կամ ճնշում-դուրս էին մղում դրանց, կամ էլ ենթարկվել իրենց, թալանում ու պարտադրում էին իրենց բարքերն ու լեզուն: Իսկ նրանց գալըստյան ժամանակ և միջավայրերում մեծ մասամբ տակավին տիրապետում էր նախնադարյան-ցեղային իրավիճակը, որը հետագայում հանգեցնելու էր

կայուն ժողովուրդների կազմավորմանը: Այսպիսի պրոցեսի մեջ էին ընգրկված ահա հնդեվրոպական լեզուներ կրողները: Այստեղ պատմական մոտեցում է անհրաժեշտ, որը ոտնահարում են կամ շարամտորեն, ինչպես Եփեսակ, Թուրք և ադրբեջանցի հեղինակները, որոնց համար դա ինքնապաշտպանության միջոց է (այսինքն՝ Եթե մենք եկվոր ենք, ապա դուք էլ եք եկվոր), կամ էլ մեր արագագիր հեղինակները, շփոթելով «եկվորությունը» եկվորության հետ և դրանով ակամա ամրապնդելով Թուրք-ադրբեջանցիների դիրքերը:

Այժմ մի կարևոր հարց. ինչպե՞ս է տեղի ունենում լեզուների տեղաշարժը: Այստեղ ես խոսքը պիտի տամ ճանաչված լեզվաբաններ Թ. Գամկրելիձեին և Վ. Իվանովին, որոնք տվյալ դեպքում արտահայտում են լեզվաբանության մեջ ամուր հիմքեր ունեցող մի տեսակետ: «Մենք միշտ հատուկ վերապահություն ենք անում,—գրում են նրանք,—այն իմաստով, որ վերջին հաշիվով դիտարկում ենք ոչ այնքան բարբառ-էթնոսների տեղաշարժերը, որքան իրենց՝ բարբառների (իմա՝ լեզուների—Գ. Ս.), որոնք մակաշերտվում են տարբեր էթնոսների վրա» (Индоевропейские языки и индоевропейцы. М., Тбилиси, 1984, էջ 912):

Սա այն տեսակետն է, որ ծաղրի է ենթարկում լեզվաբան Ռ. Իշխանյանը, համեմատելով լեզվի ալոգորիմակ տարածումը «վարակի» հետ («Հնդկահնդկական պատմությունը ծուռ հայելու մեջ». «Գարուն», 1989, № 5, էջ 77): Սակայն դառնա՞նք փաստերին: Դիցուք, նախահայրենիքը հենց Առաջավոր Ասիայում է, որի մարդաբանական տիպերը մեղ քաջ հայտնի են: Եթե ինչ-որ գոյություն չի ունեցել «վարակի» երևույթը, ապա ինչո՞վ բացատրել, որ Եվրասիայից չված հնդեվրոպական լեզվի կրողները Հնդկաստան են հասել միայն դարձնապես գունավորված, իսկ Միջին Եվրոպա՝ մաշկը սպիտակած և երկուսն էլ՝ մարդաբանական կերպարանքը էապես փոխած: Պարզ է, որ մերը մեջբերված մտքի համաձայն հնդեվրոպական լեզուները «մակաշերտվել են տարբեր էթնոսների վրա»: «Վարակը» գործել է, սակայն, ոչ միայն ալոգորիմի լայնարձակ, այլև անհամեմատ ավելի փոքր տարածություններում: Համեմատենք արևմտյան (մերձսևծովյան) շիկահեր ու կապուտաշյա վրաշիների արևելյան (Կասպի) հայատիպ վրացիների հետ և չենք կարողանա խուսափել այն եզրակացությունից, որ ժամանակին մեկը մյուսին «վարակել» է վրացերենով:

Պարզ է, որ Հնդկաստանի բնակչությունը ինչպես եղել է դարձնապես, այնպես էլ մնացել է, միայն փոխել է իր լեզուն: Նույնը և միջին կամ հյուսիսային Եվրոպայի սպիտակամաշկ կապուտաշյա բնակչությունը: Այստեղից հետևում է նաև, որ մարդաբանական տիպը կամ տիպերը տվյալ աշխարհագրական միջավայրի բնակչության համար շատ սովորի կայուն են, և նրա լեզվական իրավիճակը:

Այժմ «եկվորության» առումով անդրադառնանք հայերի խնդրին: Ես մի քանի մեջբերում: Առաջին. «...միանգամայն պատմական ու ճիշտ է համարել այն, որ արմենները երբեմն ապրել են, իրապես, Հյուսիսային Հունաստանում կամ Բալկանյան թերակղզում, այնտեղից... գաղթել ու հաստատվել են Փոքր Ասիայում և ապա... բնակչություն են հաստատել Հայաստանի լեռնաշխարհի հարավ-արևմտյան մասերում»: Երկրորդ. «Նախահայրենիքից մինչև Հայաստան երկու ճանապարհ կա. մեկը Սև ծովի ափերում եզերված, արդի Ռումինիայով իջնում է դեպի հարավ, մտնում է Թրակիա, Հելլենսպոնտոսի վրայով անցնում է Փոքր Ասիա և ուղիղ դեպի արևելք դիմելով՝ Փոքր Հայքի միջով մտնում է Հայաստան: Երկրորդը Սև ծովի հյուսիսային կողմով... իջնում է Հայաստան: Զանազան տվյալներ հավաստում են, որ նախահայրց գաղթը եղել է առաջին ճանապարհով: Երրորդ. «...մ. թ. ա. II հազարամյակի սկզբից մինչև XII դարը... հայկական ցեղերը հաստատվում են Բալկանյան թերակղզում... XII դ. մ. թ. ա. մինչև V դ. մ. թ. ա.

հայկական ցեղերը հայտնվում են Փոքր Ասիայում և շարժվում դեպի արևելք, հետզհետե հաստատվելով պատմական Հայաստանի տարածքի վրա»:

Ռրտեղի¹⁰ց են այս մեջբերումները: Ռ. Իշխանյանի հիպոթեզին ենթարկված անձինք անմիջապես կասեն. «Դե, իհարկե, Դյակոնովից»¹¹: Իրականում առաջինը Հ. Մանանդյանից է, երկրորդը՝ Հր. Աճառյանից, երրորդը՝ Գ. Զահուլյանից (1967 թ.): Կասեն՝ Զահուլյանը փոխել է իր տեսակետը: Նախ և առաջ՝ չի փոխել, այլ որոշ չափով ձևափոխել է (տե՛ս նրա «Հայոց լեզվի պատմություն: Նախագրային շրջան», Երևան, 1989, էջ 75): Այնուհետև, մեր նյութի համար կարևորը այդ չէ, այլ հետևյալը: Ի՞նչ է, վերոհիշյալ հեղինակները, այդպես արտահայտվելիս, մեր ժողովրդի թշնամիներն են եղել, կամ վատ հայրենասեր: Ոչ, նրանք հայ ժողովրդի արժանի զավակներ են, նշանավոր գիտնականներ ու հայրենասերներ: Խնդիրն այն է, որ նրանք մոտենալ են հարցին, ինչպես և պետք է մոտենալ, ոչ թե հայերի «եկվորության» տեսանկյունից (դա, ինչպես ասվեց վերը, կեղծ, միայն սպեկուլյացիաների և էլիտարկվորությունների նպատակով կիրառվող հորջորջում է), այլ հնդեվրոպական նախահայրենիքի աշխարհագրական տեղի, որը նրանք պատկերացնում էին (ինչպես և այժմ՝ մասնագետների մեծամասնությունը, այդ թվում՝ Բ. Վակոնովը) Բալկաններում:

Նոր տեսությունը (Թ. Գամկրելիձեի և Վ. Իվանովի) սուղաբերվում է պատկերացնել այն Առաջավոր Ասիայում, ավելի կոնկրետ՝ արևելյան Փոքր Ասիայից մինչև Իրանական սարահարթի արևմտյան մասը, ներառյալ Հայկական լեռնաշխարհը կամ նրա մի մասը (թեև տեսության հեղինակները, ցավոք, ըստ հնարավորին խուսափում են այդ անվանումն օգտագործելուց): Հնդունենք այդ տեսությունը և հրճվանքով նայենք, թե ինչպես հույները, լատինները, գերմանացիները, լիտվացիները և մնացած բոլոր «եկվորության» պիտակները վզներին վազում-ընկնում են Հունաստան, Իտալիա, Լիտվա և այլն: «Տեղացու» համար շատ հաճելի և շուրջ տեսարան է..., թեև իմ կարծիքով ոչինչ չի ավելացնում հայոց պատմությանը: Բայց կատակը մի կողմ:

Հիրավի, ընդունենք նոր տեսությունը, որը ներկայացված է լուրջ լեզվաբանների կողմից ու գուցե և իսկապես դիմանա բոլոր հարձակումներին (իսկ դրանք շատ են թե՛ լեզվաբանների և թե՛ հնագետների ոլորտից) և դառնա միայն ու վերջնական: Տեսնենք, թե ինչ է տալիս այն հայերիս: Հայկական տարրի տեղաշարժը այդ դեպքում խիստ սահմանափակվում է, բայց զերոյի չի հասնում: Նախ և առաջ հնդեվրոպական նախահայրենիքի նշված տարածքում պատմականորեն վկայված են նաև մի շարք այլ լեզվաընտանիքների պատկանող բավական շատ տարրեր՝ խաթերի (նախախեթերը), խուրիները, ուրարտացիները, մասամբ՝ քարթվելները, կուտիները, Զազրոսի ցեղերը և այլն, և այլն: Երկրորդ, այստեղ, ըստ նոր տեսության, պիտի լինեին նաև հնդեվրոպական նախալեզվի բազմաթիվ բարբառների (հետագայի հնդեվրոպական լեզուների) կրողները: Այդ բազմաթիվ հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական ընդհանրությունները պիտի տեղավորվեին համեմատաբար սահմանափակ տարածության վրա, ուստի և յուրաքանչյուրը պիտի գրավեր մի համեմատ տարածք: Դրանց թվում և հայերը, ավելի ճիշտ՝ նախահայերը իրենց տարածքը պիտի ունենային Հայկական լեռնաշխարհի որևէ անկյունում կամ նրա մերձավորությամբ: Թե որտե՞ղ է եղել այդ անկյունը, սրա մասին կան որոշակի կարծիքներ: Ահա գրանցից երկուսը՝ «Սկսվում է հայ վերաբնակիչները՝ ինչ-որ ներաճում այդ արամեական և սուբարա (խուրիա—Գ. Ս.)—ուրարտական (նաիրական) էթնամշակութային աշխարհների սովարաշերտի մեջ: որն իմ կարծիքով տեղի էր ունենում ավելի շուտ խաղաղ ճանապարհով, քան նվաճման...» (Դր. Капанцян. Хайаса—колыбель армян. Ереван, 1947, էջ 354): Եթե հաշվի առնենք գրքի վերնագիրը, ապա պարզ է դառնում, թե որտեղից էր սկսվում «ներաճումը», այն է՝ հայերի բնօրրան Հայաստանից, որը Գր. Ղափանցյանը իրավացիորեն տեղագրել է Հայկական լեռնաշխարհի

Հյուսիս-արևմտյան մասում: Երկրորդ: «Հնդեվրոպացիների մերձավորարևելյան նախահայրենիքը ընդունելու դեպքում (նշենք, թե ինչքան զգույշ են արտահայտվում իրենց տեսության մասին նրա հեղինակներ Թ. Գամկրելի-ձեն և Վ. Իվանովը և հիշենք արադադիրների «մաթեմատիկական ճշտությունը») ենթադրվում է պրոտոհայերենի համեմատաբար փոքր տեղաշարժ փոքրասիական տարածքի սահմաններում, որտեղ այն կարող էր շփվել անատոլիական (այսինքն՝ խեթա-լուվիական—Գ. Ս.) լեզվական աշխարհի հետ: Այստեղից պրոտոհայերը տարածվում են պատմական Հայաստանում՝ Հայկական լեռնաշխարհում, մակաշերտվելով խուրի-ուրարտական ենթաշերտի վրա» (К проблеме прародины носителей родственных диалектов и методам их установления. (По поводу статей И. М. Дьяконова в ВДИ, 1982, № 3 и 4), ВДИ, 1984, № 2, с. 119).

Այս երկու տեսակետները գրեթե նույննում են և շատերի կողմից են ընդունվում, այդ թվում և մեր (տե՛ս Գ. Խ. Սարգսյան. Ուրարտական տերությունը և հայերը, «Ուրարտու-Հայաստան» գրքում, Երևան, 1988): Դրանք հիմնված են կոնկրետ պատմական փաստերի վրա, որոնք վկայում են, որ հիշյալ տեղաշարժերը տեղի են ունեցել մ. թ. ա. II հազարամյակի երկրորդ—I հազարամյակի առաջին կեսերին և երկուստեղ ունեցել Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասերը, որտեղ, բացի Հայաստանից, աղբյուրներում հիշատակվում են նաև այլ՝ հայերին առնչվող երկրներ, պետական կազմավորումներ ու ցեղախմբեր, ինչպես, օրինակ, Թեգարաման («Տուն Թորգոմա»՝ Թորգոմի հայերի առասպելական նախահայրն է), Սուխմեն (վրացերեն «սոմենիս»՝ հայ), Մևիդ-Մալաթիան (հայերի հնագույն անվանումը հույների մոտ հղել է «մելիտենացիներ»), Իսուվա-Մուփան (Մոփքը), Ալզին (Աղձնիքը), Արմեն, Ուրմեն և այլն:

Այս տեսակետը նույնպես ծանակվում է Ռ. Իշխանյանի կողմից, որսկզբիցով որպես «իսկական «ֆոնուս», և նա առաջարկում է իր սեփական տեսակետը, այն է, թե «հնագույն հայոց լեզուն ու այն կրող հայկական ցեղերը» նախասյս տարածված են եղել Հայկական լեռնաշխարհի «ինչ-որ մասերում» («Պատկերազարդ պատմություն հայոց», էջ 14): Իսկ ինչու՞ «ինչ-որ մասերում», եթե համապատասխան մասերի տեղը վկայված է պատմական փաստերով: Որովհետև նա զրանից հետո գրում է. «Մ. թ. ա. III հազարամյակի կեսերին Հայկական լեռնաշխարհի հիմնական տարածքը հայալեզու էր, բնակեցված էր հայկական ցեղերով» (էջ 17): Ընթերցողի համար շատ հաճելի տեսակետ է, բայց այդպիսով մեկ-երկու հազարամյակ արհեստականորեն «հնացված» տեղաշարժերը ցավոք իսպառ մերկանում են պատմական փաստերի հանդերձանքից: Իսկական պատմությունը զոհաբերվում է հոգուտ հորինվածքի: Սա արադադիրների սովորական ոճն է, ինչպես կտեսնենք:

2. Ցեղ և ժողովուրդ: Ռ. Իշխանյանը չի ընդունում ցեղ, ժողովուրդ, ազգություն, ազգ և նման այլ հասկացությունների որակական տարբերությունը: Ահա. «Հայկական ցեղի անդամը ազգությամբ հայ է եղել՝ հայալեզու, իսկ բոլոր հայկական ցեղերի... համադրությունը հենց եղել է և է հայ ժողովուրդ կամ հայ ազգ, որ միևնույնն է»: Նա գտնում է, որ այդ հասկացությունները «ժողովուրդների մեծ առաջնորդի» հորինվածքներն են, որոնք օնեթմվել են մեր պատմաբանների մտածելակերպը և հորինվել է եկվորա-ձուրդա-կազմավորական մտացածին տեսությունը» («Հայոց հնագույն պատմությունը ծուռ հայելու մեջ», էջ 76):

Բերենք մի քաղվածք: «Երբեմն ցեղը նույնացվում է ժողովրդի կամ ազգության հետ (ընդգծումները մերը չեն—Գ. Ս.), թեև այդ տերմինները ենթադրում են ոչ թե միայն լեզվական և ժազման ընդհանրություն, այլ ավելի սերտ, մշակույթի պատմությամբ պայմանավորված կապ, ընդ որում ժողովուրդը կարող է կազմավորվել մի քանի ցեղերից և նույնիսկ տարբեր ռասաների մասերից»: Թեև այստեղ գտնում ենք ցեղ-ժողովուրդ-ազգություն

յուսերը և նրանց տարրերակումը, այլև «ժողովրդի կազմավորում» արտաստությունը, իսկ «ձեռնարկում» ըստ կոնտեքստի ենթադրվում է, սակայն վճռականորեն պետք է ասել, որ «ժողովուրդների առաջնորդի» մասը այստեղ խառը չէ, քանի որ մեջքերումն արված է Բրոկհաուզի-Էֆրոնի հայտնի հանրագիտարանից, որի համապատասխան հատորի լույս ընծայման ժամանակ (հ. 28ա, 1898, էջ 868) «առաջնորդը» տակավին 19 տարեկան էր, իսկ նրա այսօրվա «հետևորդները» դեռ չէին ծնվել: Բավարարվենք այս օրինակով, Ուրարտուի կարելի էր վկայակոչել նաև «առաջնորդի» միջամտությունից անպայման խուսափած այսօրվա արտասահմանյան դպրոցական դասագրքերը, որից ավելորդ անգամ պարզ կդառնար մեր արագաձիգ հեղինակի դատողությունն տեղի ունեցող իրադրության բնույթը:

Արդ, ժողովուրդը (կամ ազգությունը) պատմականորեն կազմավորվում է ցեղերից, ըստ որում ինչպես միևնույն, այնպես էլ տարբեր լեզուներով խոսող ցեղերից: Ինչպես պարզվեց, դա հասկանում էին դեռևս 100 տարի առաջ: Բայց կոնկրետ ինչպե՞ս է կատարվում այդ կազմավորումը:

Երբ արդեն տեսական դատողություններով չծանրաբեռնելու նպատակով անմիջապես դիմենք մեր լավագույն աղբյուրներից մեկին՝ Քսենոփոնի «Անաբասիսին»: Հունական տառագրարանոց ջոկատը, Քսենոփոնի ղեկավարությամբ, Միջագետքից դեպի Սև ծով նահանջելիս մ. թ. ա. 401 թ. մտնում է կարդուխների երկիրը, կտրում անցնում այն և հասնում Հայաստանի (Արմենիայի) սահմանին: «Այդ օրը, — գրում է Քսենոփոնը, — հելլենները դարձյալ մնացին գյուղերում, որոնք գտնվում էին Կենտրիտես գետի (Արևելյան Տիգրիս, Բոհատան՝ Վանա լճից հարավ) հարթավայրից վերև: Գետի լայնքը համարյա երկու պլեթրոն է. այն սահման է Արմենիայի և կարդուխների երկրի միջև» (IV, III, 1): Հույները անցնում են գետը, երկար ճանապարհ կրտում Հայաստանի միջով հարավից հյուսիս: Մոտենալով նրա հյուսիսային սահմաններին և հավաստիանալով, որ դեռևս Արմենիայում են գտնվում, նրանք տեղեկանում են, որ «հարեան երկիրը խալյուքների երկիրն է» (Պետք է նշել, որ Քսենոփոնը այլ տեղ խալյուքներին անվանում է խալդայներ, իսկ Ստեբանը ուղղակի գրում է. «ներկայիս խալյուքները հնում կոչվել են խալդայներ», XII, 3, 30): «Այնուհետև, — շարունակում է Քսենոփոնը, — առաջ գնացին... Փասիս (Արաքս) գետի մոտ, որի լայնքը մեկ պլեթրոն էր: Այստեղից առաջ գնացին երկու կայան՝ տասը փարսախ և լեռնանցքով դեպի դաշտ իջնելիս նրանց դեմ ելան խալյուքները (խալդայները), տառիները և փասիանները» (IV, IV, 4): Սրանց դիմադրությունը կոտորելով, «նրանք գնացին՝ դեպի տառիների երկիրը հինգ կայան, երեսուն և հինգ փարսախ, և նրանց պարենը սպառվեց, քանզի տառիները ապրում էին ամրացված վայրերում, որտեղ և տեղափոխել էին իրենց ամբողջ պարենամթերքը» (IV, VII, 1): «Այստեղից նրանք խալյուքների երկրի միջով գնացին յոթ կայան՝ հիսուն փարսախ» (IV, VII, 15) և այլն:

Այսպես, ուրեմն, նախքան հարավից Հայաստան մտնելը, հույներն անցնում են կարդուխների երկրով, իսկ հյուսիսում Արաքսն (ակունքներից ոչ հեռու) անցնելով, դուրս են գալիս Հայաստանից և մտնում տառիների, խալյուք-խալդայների երկրները, բախվում փասիանների հետ: Իսկ մեր վաղ միջնադարյան պատմագիրները և VII դարի «Աշխարհացույցը» Հայաստանի սահմաններում և արդեն որպես բուն հայկական գավառներ են հիշատակում Կորդուքը (կարդուխներ)՝ հարավում, Բասեանը, Տայքը, Խաղտիքը (փասիաններ, տառիներ, խալդայներ)՝ հյուսիսում, որ նշանակում է, թե դրանք այդ ընթացքում են հայացել: Կարծում եմ Ռ. Իշխանյանն ընկրկում է այս փաստերի առջև: Ամենևին: Նա սառնասրտությամբ հաղկահարդար է տեսնում Քսենոփոնի հետ, ասելով. «Հետաքրքրական է, որ Քսենոփոնը հայերի որոշ խմբակցությունների տարբեր անուններ է տալիս, օրինակ, Տայքի հայերին անվանում է տառիներ (վրիպակ. պետք է լինի տառիներ), հայոց Բասեն գավառի բնակիչներին՝ փասիաններ, Մեծ Հայքի հյուս-

սխառեմության լեռներում քնակվող հայերին անվանում է խալդայներ կամ խալիբներ, Երվանդ թագավորի (վրիպա՞կ՝ սատրապի փոխարեն) զորքի հայ մարտիկներին՝ մարգեր» (Պատկերազարդ պատմություն հայոց, էջ 105)։

Իսկապես որ հետաքրքրական է... Բայց մենք չենք գնա ականատես պատմիչի հստակ տվյալների այս ոտնահարումն ու «սվաղումը» եղծելու ուղիով (ընթերցողը ինքը կարող է դիմել բնագրին), այլ կշարունակենք մեր միտքը, շիրավի, հարց է ծագում, թե ի՞նչ ճանապարհով են այս ոչ հայկական ցեղերը հայացել, դարձել հայ ժողովրդի մաս։

Ռ. Իշխանյանի զավեշտի պաշարները անսպառ են և հաջողությամբ փոխարինում են նրա նախընտրած «պալեոլիթից մինչև գլավլիտ» գիտական հարցերի կապակցությամբ կուտակած գիտելիքների պակասին։ Տվյալ դեպքում նա ծիծաղից թուլանալով գրում է. «Ձուլել, համաձուլել, լուծել՝ նախորդ հեղինակին (նկատի ունի Բ. Ն. Առաքելյանին) սիրելի բառերի կողքին Գ. Սարգսյանը ավելացնում է ևս մի քանիսը՝ տառալուծել, հալեցնել, ներծծում, դիֆուզիա» («Մուռ հայի», էջ 77)։ Ցավոք սրտի, ես մոռացել էի ավելացնել սրանց նաև ուծացում բառը, և այժմ ուղղում եմ այդ սխալը։ Այո, հենց այս բառաշարով են բնութագրվում Քսենոփոնի հիշատակած ոչ հայկական «փասիան», «կարդուխ», «տառխ», «խալգայ» այլև «հեսպերիտ» (վերջիններս, թերևս, վրացախոս էին) ցեղանունների՝ հայկական Բասան, Կորդուք, Տայք, Խաղտիք ու Սպեր զավառանունների փոխարինմանը ուղեկցած պրոցեսները, որոնք, իրենց հերթին, կազմում էին հայ ժողովրդի՝ Ռ. Իշխանյանի՝ երիցս նշումած կազմավորման ընթացքի բովանդակությունը։

Թվում է, թե Ռ. Իշխանյանի հակակրանքը այս բառերի նկատմամբ գալիս է այն համոզումից, որ հայերը ընդունակ չէին ձուլել, ուծացնել, տարբալուծել և այլն։ Ու եթե խոսքը գնար հայերի լուծման, տարբալուծման, ուծացման ու ձուլման մասին, ապա նա հանգիստ կընդուներ այդ բոլորը։ Ահա թե որտեղ է թաքնվել ստրկամտությունը։ Ցանկանում եմ այս կապակցությամբ հիշեցնել Մովսես Խորենացու խոսքերը Տիգրան Երվանդյանի մասին. «Նա... մեր ազգը բարձրացրեց և մեզ, որ լծի տակ էինք, դարձրեց շատերին լուծ դնողներ և հարկապահանջներ...» (I, 24)։

Բայց կարող եմ սփոփել Ռ. Իշխանյանին, Երեք հազար տարի առաջ տեղի ունեցած միաձուլումները, ուծացումները և այլն, որոնք ժողովուրդների կազմավորման անխուսափելի ուղեկիցներն էին, ամենևին նման չէին այսօրվա ազգամիջյան ճակատներում տեղի ունեցող համանուն երևույթներին, որովհետև տեղի էին ունենում անկայուն ու հեշտ ցրվող ու միացող ցեղերի ու ցեղային միությունների նկատմամբ, հետևաբար և մեծ մասամբ՝ անարյուն, շատ դեպքերում նաև լեզվական «վարակի»՝ Ռ. Իշխանյանի կողմից այսպանված միջոցով։ (Չշփոթել հնում ևս արյունոտ ու դաժան նվաճողական-թալանչիական պատերազմների հետ, որոնք, սակայն, երբեք չէին հանգեցնում ժողովուրդների կազմավորման)։ Մինչդեռ այսօրվա ձուլում-ուծացումը իր ուծացման առարկան ունի ի դեմս վաղուց կազմավորված, սեփական ազգային մշակույթ ստացած ժողովուրդների ու նրա ձևերն ու հետևանքները համապատասխանաբար այլ են։

Տեղին է այստեղ կրկին հիշատակել Գր. Ղափանցյանից վերը արված մեջբերումը այն մասին, թե հայերի ներաճումը այլալեզու և այլամշակույթ աշխարհների ստվարաշերտի մեջ... տեղի էր ունենում ավելի շուտ խաղաղ ճանապարհով, քան նվաճման»։

Մենք բերեցինք հայ ժողովրդի կազմավորման միայն մի դրվագ, այն էլ բավական ուշ շրջանից, երբ Հայկական լեռնաշխարհի կենտրոնական մասը արդեն վաղուց հայացած էր և օրակարգի մեջ էին նրա ժայռամասերը։ Կարելի է բերել և այլ դրվագներ, որոնք վերաբերում են ավելի վաղ ժամանակներին, մ. թ. ա. II հազ. վերջերին—I հազ. սկզբներին և այլն, բայց կարծում ենք, այստեղ դրա կարիքը չկա։ Ցանկացողը կարող է գտնել դրանք վերը վկայակոչված իմ աշխատության մեջ։

3. Ուրարտացիներ, ուրարտեհեհ: Արագագիր հեղինակները ժխտում են ուրարտացիների գոյությունը և պնդում, թե ուրարտացիներ կոչվածները նույնպես հայեր են եղել, այսինքն՝ թե «ուրարտացին» հայի մի այլ անվանումն է: Շրջանցում եմ Ուրարտու-Արարատ տեղանիքների շուրջը բարձրացրած աղմուկը, նշելով միայն, որ դրանց նույնության թեզը գիտության մեջ վաղուց արժարժվում է և ամենևին նրանց նվաճումը չէ:

Ուրարտացիների (ոչինչ չի փոխվի, եթե նրանց անվանենք արարատցիներ կամ ռիայնացիներ) գոյության վկաներն են հարյուրավոր գրքերի ու այլ հրապարակումների մեջ ամփոփված պատմական, լեզվական ու հնագիտական փաստերը, որոնք հայտարարվում են գոյություն չունեցող և, միաժամանակ, գաղտագողի իրացվում են՝ շուռ տված վիճակում: Ոչ մի նոր նյութ, ոչ մի նոր փաստ, լինի պատմության, լեզվի կամ մշակույթի բնագավառից, արագագիր հեղինակները չեն հայտնաբերել ու ներմուծել «Դեռ չսովորած» աստվածաբան են», ինչպես կասեր Մովսես Խորենացին:

Կանգ առնենք երեք կետի վրա. լեզու, մշակույթ, պատմական ընթացք: Լեզու. Ուրարտական մեզ հայտնի արձաններից երկրորդը՝ Մարգուրի I-ը (մ. թ. ա. IX դարի 30-ական թթ.) իր միակ, բայց մի քանի օրինակով մեզ հասած՝ Ուրարտու պետության անդրանիկ արձանագրությունը, որը հաղորդում է Ուրարտուի Տուշպա մայրաքաղաքի կառուցման մասին, գրել է տվել աքքադերեն (ասուրա-բաբելոններեն) լեզվով: Այդ լեզուն ժամանակին միջազգային հաղորդակցության միջոց է ծառայել և որպես այդպիսին կիրառվել է Առաջավոր Ասիայի մի շարք երկրներում՝ գրավոր լեզվի դերում: Ի դեպ, այդպիսի երկրները՝ էլամ, Միտաննի, Խաթթի, Ուրարտու, փոխ են առել այն իր դպրությանը՝ սուրա-բաբելական սեպագրով հանդերձ, որն ապա հարմարեցրել են նաև իրենց սեփական բնիկ լեզուներին, հանդամանք, որ է՝, ավելի է ընդգծում աքքադերենի միջազգային դերը: Բացի Մարգուրի I-ի վերոհիշյալ արձանագրությունից, պահպանվել են նրա հետնորդներից ևս երկուսի մեկը: Սուրա-բաբելոններն արձանագրությունները, սակայն սրանք արդեն ոչ թե ինքնուրույն արձանագրություններ են, ինչպես Մարգուրի I-ինը, այլ հանդես են գալիս երկու (Քելիշինի և Թոփուզավայի) բիլինգվալներում (երկլեզվյան արձանագրություններում)՝ ուրարտերեն նույնական տարբերակին հանդիպադրված, ընդ որում նրանք դրված են ուրարտա-ասուրական սահմանի վրա, բորել էլ Բացաստրվում է աքքադերեն տարբերակի առկայությունը:

Մարգուրի I-ի որդի և անմիջական հաջորդ Իշպուհինի օրոք (մ. թ. ա. IX դարի 20—10-ական թթ.), որ մեզ հայտնի երրորդ ուրարտական թագավորն է, ուրարտական դպրության մեջ շրջադարձ է կատարվում. հանդես է գալիս մի այլ գրավոր լեզու, որ գոյ է առնում նույն, բայց պարզեցված սեպագրով: Հարց է ծագում, թե ի՞նչ լեզու է դա:

Երբ այն մասնագետների կողմից ընթերցվեց, ապա պարզվեց, որ դա ոչ հնդեվրոպական, ու ոչ էլ որևէ այլ ժանոթ լեզվաընտանիքի պատկանող լեզու է, այլ ազգակից է խուռիերենին, որի կրողները հնում տարածված են եղել Հյուսիսային Միջագետքում, Հայկական լեռնաշխարհի հարավային գոտում, Եփրատի վերին հոսանքի հովտում և այլուր: Մ. թ. ա. XVI—XIV դդ. Նրանք Հյուսիսային Միջագետքում ստեղծել են իրենց Խուռի կամ Միտաննի կոչված պետությունը՝ Վաշշուգանե մայրաքաղաքով, ունեցել են հնդկական անուններ կրող թագավորական դինաստիա, գործերը վարել են, բացի ասուրերենից, նաև իրենց հարազատ խուռիերեն լեզվով, որի համար, ինչպես ասվեց վերը, կիրառել են պարզեցրած (սակայն միանգամայն այլ ուղղությամբ, քան ուրարտացիները) աքքադական սեպագիրը: Մասնագետները պարզել են, որ խուռիերենն ու ուրարտերենը, հնում ծագելով միևնույն հիմք-լեզվից, այնուհետև էապես տարանջատվել են և մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում տարբեր լեզուներ էին: Դրանց հարազատության աստիճանի մասին մասնագետների տեսակետները չեն համընկնում: Այսպես, Ի. Դյակոնովը և

Մ. Խաչիկյանը դրանք իրար բավական մոտ են համարում, իսկ Գ. Զահուկյանը՝ թեև հարազատ, բայց բավական իրարից հեռու:

Արդ, Ռ. Իշխանյանը, առանց հաշվի նստելու մասնագետների տեսակետների հետ, և ինքն էլ այս լեզուների ուսումնասիրության ընազավառում դույզն ինչ քայլ կատարած չլինելով, կամսյականորեն, ինչպես և սում են՝ «մատից ծածած», հայտարարում է, թե դրանք միևնույն լեզուն են, միայն վկայված են այդ լեզվի զարգացման տարբեր վուլներում: Սվ այս հիմքի վրա ուրարտերենը վերանվանում է «նորխուրերեն»: Այս հարցը սկզբունքային է և այն պետք է մանրամասն պարզաբանել:

Տվյալներ կան, որ դեռևս մ. թ. ա. XIII դարի վերջերին իր դպրութունը կորցրած խուրերեն լեզուն այսուհանդերձ շարունակել է խոսվել խուրիաբնակ վայրերում՝ Հյուսիսային Միջագետքում, մասամբ նաև Հայկական լեռնաշխարհի հարավային գոտու առանձին հատվածներում, օրինակ, Շուրիա երկրում, ուր խուրական տարրը միշտ էլ բավական ստվար է եղել: Սվ խոսվել է ոչ միայն, ասենք, հաջորդ, մ. թ. ա. XII դարում, այլ նաև դրանից 4—5 հարյուրամյակ ուշ: Այդպիսի տվյալներ են ասուրական արձանագրությունների մեջ հանդես եկող հատուկ անունները: Եթե մ. թ. ա. XII դարի ասուրական արձանագրություններում հանդիպում ենք, ասենք, Շադի-Թեշուր, Քալի-Թեշուր, Քիլի-Թեշուր անուններին, ապա նույնը տեսնում ենք և մ. թ. ա. VIII—VII դդ., այսինքն՝ ուրարտերեն լեզվի կիրառման ժամանակաշրջանում, որի մեջ Թեշուր աստվածը ներկայանում է, ինչպես հայտնի է, Թեշեբա ձևով: Այսպես, Սարգոն II-ի և Ասարխադդոնի արձանագրություններում հիշատակված են Բագ-Թեշուր, Նիգ-Թեշուր, Լիգի-Թեշուր, Շերպի-Թեշուր անունները:

Այսպիսով, եթե ուրարտերենը «նորխուրերեն» լինելը, ապա այդ խուր-ուրարտական ընդհանուր աստվածությունը նրանում ևս կներկայանար Թեշուր ձևով, կամ էլ վերոհիշյալ անուններում Թեշուր ձևին կփոխարիներ Թեշեբա ձևը: Այս կարգի երևույթները վկայում են, որ խուրերենը նաև մ. թ. ա. VIII—VII դդ. մնում էր խուրերեն, ուրարտերեն էլ՝ ուրարտերեն:

Բայց եկեք մի պահ ընդառաջենք Ռ. Իշխանյանի բուռն ցանկությանը և ուրարտերենը համարենք խուրերեն կամ, ինչպես ինքն է ուզում՝ «նորխուրերեն» և Ուրարտուի ողջ բնակչությունը, ներառյալ և իշխող թագավորական հարստությունը՝ հայեր: Այսպիսով, նրանք սկզբում ընդունել են գրավոր լեզվի դերում առաջընթացը, որը միջազգային շփման լեզու էր: Հասկանալի է: Այնուհետև նրանք մի կողմ են դնում միջազգային առաջընթացը և ընդունում որպես գրավոր լեզու... «նորխուրերենը», որը ընդամենը հայերի մերձավոր հարևանների խոսակցական լեզուն էր և վաղուց արդեն, գրեթե կես հազարամյակ առաջ, կորցրել էր իր դպրութունը:

Այս դրույթի անհեթեթության չափը թերևս անցած-գնացած դարերի ու հազարամյակների հանգամանքով շղարշված է ներկայանում ժամանակակից ընթերցողին, ուստի անցկացնենք մի զուգահեռ մեզ ավելի մոտիկ ու հարազատ ժամանակաշրջանի և պարագաների հետ:

Պատկերացնենք, որ V դարի սկզբներին հայերը, հայոց թագավոր Վռամշապուհը, հրաժարվում են Հայաստանում մինչ այդ դրավոր լեզուներ ծառայած հունարենից ու արամեերենից (որի տարբերակն էր ասորերենը. շշփոթել սեպագիր ասուրերենի հետ), որոնք դարեր շարունակ միջազգային լեզուներ էին (տե՛ս հանրագիտարանները) և հենց որպես այդպիսիք էին ստանձնել գրավոր լեզուների դերը ամբողջ Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում և, նրանց թվում, բնականաբար, նաև Հայաստանում: Ահա, ուրեմն, հայերը հրաժարվում են դրանցից, ինչպես և իրականում եղել է, և ընդունում որպես գրավոր լեզու... վրացերենը, հայերի մերձավոր հարևանների լեզուն, որը իր դպրութունն էլ չունի:

Հենց այսօրինակ անմտովություն է հրամցնում Ռ. Իշխանյանը մեծերին ու մանուկներին (տե՛ս «Պատկերազարդ պատմություն հայոց», էջ 42—

45)։ Նրա փորձերը դասել իր հնարած «նորխուռներին» միջազգային լեզուների ծառայած աքքադերենի, արամեերենի և հունարենի շարքը, որ փաստերի «սովաղման» մի նոր օրինակ են հանդիսանում, միայն անիրագրելի մարդկանց կարող են մոլորեցնել և հիշեցնում են մեր օրերում կենտրոնական լրատվական միջոցների բերանում սովորական դարձած այլևայլ «հավասարեցումները», փաստերի «սովաղումները»։ Ավելորդ չէ նշել, որ նույնիսկ խուռներենի ծաղկման ու դարձումը ունենալու դարաշրջանում Խուռի-Միտանիի արքա Թուրաթթան (մ. թ. ա. XIV դար) իր նամակագրությունը Նգիպտոսի փարավոնի հետ աքքադերեն լեզվով է վարել։

Ըստ այնմ, ուրարտացիները, հրաժարվելով սկզբում որպես գրավոր լեզու ընդունած աքքադերենից, բնականոն կերպով գրավոր են դարձնում իրենց սեփական լեզուն՝ ուրարտերենը (կամ, եթե ուզում եք՝ արարատերենը, բիայներենը և այլն), նույն այն ձևով, ինչ որ հետագայում հայերը, հրաժարվելով սկզբում որպես գրավոր լեզուներ ընդունած արամեերենից և հունարենից, բնականոն կերպով գրավոր են դարձնում իրենց սեփական լեզուն՝ հայերենը։

Ասվածը չպետք է ըմբռնել այնպես, թե ուրարտերենը գիտական խնդիրների այլևս չի հարուցում։ Հարուցում է և ոչ քիչ քանակությամբ։ Դրանք հիմնականում, եթե ոչ՝ բացառապես, կապվում են պահպանված՝ քանակով բավական սովոր նյութի միակողմանիության հետ։ Մեր ձեռքի տակ եղած 500-ի չափ արձանագրությունները գրեթե անխտիր պալատական-քրմական ոլորտի պաշտոնական արտադրանք են՝ սահմանափակ և առանձնահատուկ բառակազմով։ Նյութը արքաների ու զավակների և շինարարական սխրանքներն են, ծիսական որոշ կանոններ, արձանագրությունները եզրափակող միօրինակ անեծքներ՝ խաթարողների գլխին։ Այս բոլորը կաղապարված են միապաղաղ բանաձևերի մեջ։ Նշենք նաև, որ այս բանաձևերի հետ միասին սեպագրական նշանների ձևը և կազմը նույնպես գրեթե անփոփոխ է մնում ուրարտական արձանագրությունների նշված ժանրի շուրջ երկդարյա գոյության ընթացքում։ Սա ամրապնդում է այն եզրակացությունը, որ ի դեմս այդ ժանրի, մենք գործ ունենք նրա թողարկման ժայռահեղ ավանդական, պահպանողական, կարծրացած աղբյուրի հետ, որպիսին ներկայանում է պալատական-տաճարային ոլորտը։

Բացի սրանից մեր ձեռքի տակ կան ընդամենը մեկուկես տասնյակ կավե աղյուսիկներ ու դրանց բեկորներ, որոնք թեև դարձյալ վարչական, բայց ավելի առօրյա բնույթ ունեն՝ հրահանգներ, նամակներ, ցուցակներ են և այլն։ Սրանք իրենց նոր ձևերով ու սեպագիր նշաններով աշխուժություն են մտցնում նախորդ խմբի ստեղծած միապաղաղ պատկերի մեջ, բայց, քչաքանակ լինելով, ի վեճակի չեն ստեղծելու ուրարտերենի ամբողջական պատկերը։

Սակայն նույնիսկ մեր ունեցածը, իր պաշտոնական բնույթով ու կարծրացածությամբ հանդերձ, որոշակի տվյալներ է պարունակում ուրարտերենի խոսակցական լինելու մասին, այն է. նամակների առկայությունը, երկու բարբառների գոյության հետքերը, որոշ թագավորների անձնանունների՝ ուրարտերենի հիմքի վրա ստուգաբանելու հնարավորությունը, նրանց հիմքի վրա ստեղծված քաղաքանունների ուրարտական տեսքը (օրինակ՝ Ռուսախի-նիլի, որ -խի-նիլին զուտ ուրարտական վերջավորություն է, մինչդեռ, ասենք, Տիգրան II-ը, թեև կիրառում էր, որպես գրավոր, հունարենը, այսուհանդերձ, իր հիմնադրած քաղաքը անվանել է ոչ թե հունական ձևով՝ Տիգրանուպոլիս, այլ հայերեն՝ Տիգրանակերտ) և այլն։

Ի մի բերելով լեզվի մասին ասվածը, տրամաբանության տեսակետից նախապատվությունը նշված հեղինակներից պետք է տալ Ս. Այվազյանին, որը պնդելով, որ ուրարտացիները հայեր են եղել, հաջորդ քայլով էլ պնդում էր, որ ուրարտերենը հենց հայերենն է։ Եթե այս վերջին թեզը ապացուցվեր, ապա հիրավի ակնհայտ կդառնար, որ ուրարտացիները իրոք հայեր են։ Իսկ

Ռ. Խշխանյանը լարախաղացի դերում է, որը երկար շարունակվել չի կարող և ի վերջո հանգեցնում է երկրնտրանքի՝ կամ ուրարտեբներ հայերենն է, որ նա, լեզվաբան լինելով, չի կարող ընդունել, կամ էլ՝ որ ուրարտեբներն հենց ուրարտեբներն է։ Այս էլ, իր հերթին, նշանակում է, որ այն ունեցել է իր կենդանի կողմերը ի դեմս ուրարտացիների (կամ արարատցիների, բիայնացիների և այլն)։ Երրորդ լուծում չկա։

Մշակույթ։ Հենց սկզբից նշենք մի հատկանշական երևույթ։ Մեր արագագիր հեղինակների միջև կա լեզվաբան (թեև շատ հեռու կանգնած շոշափվող խնդիրներից), կան պատմաբաններ (թեև դարձյալ դրանցից հեռու կանգնած), երկրաբան, գրողներ և այլն, բայց չկա գեթ մի հնագետ։ Պատճառը պարզ է. գիտության մեջ, ի տարբերություն կրկեսի, նյութական առարկաներով շատ ավելի դժվար է ձեռնածուկուն (ժողովրդություն) անել, քան անմարմին հասկացություններով։ Այստեղից է ծնվում նաև այն հանգամանքը, որ արագագիրները աշխատում են շրջանցել նյութական մշակույթի հետ կապված հարցերը, բայց և այնպես, որքանով որ դրանք շոշափում են, այնպիսի բաներ սովորության համաձայն գլխիվայր են ներկայացնում։

Հնագետ չլինելով, ես կաշխատեմ կարճ կապել, ասպարեզը թողնելով մասնագետներին։

Խնդիրն այն է, որ ճիշտ պատկերացում ստանանք բուն Ուրարտուի (այսինքն՝ Վանա լճի ավազանի և, հատկապես, նրա արևելյան մասի) և Հայկական լեռնաշխարհի այլ մասերի նյութական մշակույթի հարաբերակցության մասին։ Վերջիններից ընտրենք հորհրդային Հայաստանի տարածքը, որպես հնագիտորեն անհամեմատ լավ հետազոտված երկրամաս։ Այստեղ կան ուրարտական երեք մեծ (Արգիշտիխինիլի-Արմավիր, Թելլեբախինի-Կարմիր բլուր և էրեբունի-Արինբերդ) և բազմաթիվ փոքր պեղավայրեր։ Դրանցից ժառող նյութերից մեզ հետաքրքրող ժամանակաշրջանին (մ. թ. ա. VIII—VII դդ.) վերաբերող մասը հստակորեն բաժանվում է երկու հիմնական խմբի՝ ուրարտական նյութերի և տեղական նյութերի։ Տարբերությունը այնքան է ակնառու, որ մասնագետ-հնագետը բոլոր դեպքերում անմիջապես կարող է որոշել այս կամ այն իրի կամ հուշարձանի պատկանելությունը։ Սա վերաբերում է նյութական մշակույթի բոլոր տեսակներին անխտիր. ամրոցներին, քաղաքորմներին, տաճարներին, քնակավայրերին ու դամբարաններին, բրոնզե, երկաթե, քարե, ոսկե, արծաթե և այլ նյութերից պատրաստված առօրյա օգտագործման իրերին, զարդերին, զենք ու զրահին և այլն։

Եթե տեղական նյութերի խումբը խոր կապեր է ցուցաբերում նախորդ դարերին ու հազարամյակներին վերաբերող տեղական նյութի, ինչպես և հետագայում այստեղ զարգացած մշակույթի հետ, այսինքն կազմում է անընդմեջ շղթայի օղակներից մեկը, ապա ուրարտական խումբը զուրկ է այդպիսի կապերից։ Այն աղերսվում է սոսկ Վանա լճի ավազանի ուրարտական մշակույթին, հանդես է գալիս այսրաբաքսյան շրջաններում մ. թ. ա. VIII դարի սկզբներից և էական չափով վերանում է մ. թ. ա. VII դարից հետո, ու համեմատաբար աննշան մասով ներծծվում տեղական նյութական մշակույթի մեջ որպես ուրարտական ժառանգություն։ Վերջինը անխուսափելի էր, քանի որ ներմուծված որոշ արտադրական ձևեր ու նմուշներ տեղում առատորեն կրկնօրինակման են ենթարկվել և հետզհետե այս կամ այն չափով ներթափանցել տեղական մշակույթի մեջ ու դարձել նրա օրգանական մասերը։

Առկա մասնակի տվյալների հիման վրա կարելի է եզրակացնել, որ նմանօրինակ պատկեր են ներկայացնում նաև Հայկական լեռնաշխարհի մնացյալ, ժամանակին Ուրարտուի կողմից նվաճված ու շուրջ երկու հարյուրամյակ նրա տիրապետության տակ մնացած մասերը։ Ահա այդ մասերում էլ, ներառնելով նաև Արարատյան դաշտը, պետք է փնտրել ու գտնել բուն հայկական նյութական մշակույթը, այն մշակույթը, որը տեղերում ունեցել է խոր արմատներ և Ուրարտուի անկումից հետո էլ հարատևել է, ինչպես որ հաջատևել է ինքը հայ ժողովուրդը։ Իսկ եթե փորձենք նույնացնել հայկա-

կանի հետ ուրարտական մշակույթը, ապա ստիպված պիտի լինենք պատասխանելու այսպիսի, տվյալ դեպքում անպատասխանելի, հարցերի, թե այդ ինչպե՞ս եղավ, որ հայ ժողովուրդը հարատևեց, իսկ նրա նյութական մշակույթը՝ ամրոցների, տաճարների, դամբարանների տեսակները, զենք ու զարդի, խեցեղենի ձևերը և այլն, վերջապես՝ սեպագրական դպրությունը, գրեթե լիովին կործանվեց-վերացավ։ Ու. Իշխանյանին, սակայն, նման հարցը ամենևին էլ չի նեղում։ «Արարատյան հայոց թագավորությանը (այսինքն՝ Ուրարտունին—Ք. Ս.) հաջորդած Երվանդունիների թագավորության ժամանակ,—գրում է նա,—երբ հայերը մերթ անկախ էին լինում, մերթ ընկնում իրանյան Մարաստանի կամ Պարսկաստանի իշխանության տակ, մշակույթի զարգացումը ինչ-որ չափով դանդաղեց...» («Պատկ. պատմ. հայոց», էջ 112)։ Ինչպես տեսնում ենք, Ու. Իշխանյանը շարունակում է անվարան կիրառել փաստերի «սովազման» իր մշակած այն մեթոդը, որին մենք արդեն հանդիպել ենք վերը։

Ավարտելով այս թեման, ավելացնենք, որ Հայկական լեռնաշխարհի նյութական մշակույթի համայնապատկերը առանձնապես շոշափելի տպավորություն է տալիս սկզբնական, փոքր, վանա լճի մոտերքում ծավառած բուն Ուրարտու-Րիայնիլիի և նրա հետագայում ստեղծած խոշոր տերության տարածքային փոխհարաբերության մասին։

Ըստ էության, նմանօրինակ պատկեր է ներկայացնում նաև հոգևոր մշակույթը, թեև ինչպես ասվեց, այն, նյութական առարկաների հետ գրեթե կապված չլինելով, լայն հնարավորություններ է ընձեռում ձեռնածության համար, որի հետ էլ ամեն քայլափոխին հանդիպում ենք արագագիր հեղինակների գործերում։

Զծավալվելու համար, բավարարվենք ուրարտական գլխավոր աստվածների եռյակի՝ Խալդիի, Թեյշեբայի և Շիվինիի հետ կապված խնդիրներով։ Թողնելով Խալդիին որպես աղանդեր, խոսենք մյուս երկուսի մասին։ Հարց է ծագում, թե ինչու՞ Ուրարտուի հայ թագավորներն ու հայ ժողովուրդը «նորիսուռիներին» հետ միասին պետք է որդեգրեն նաև «նորիսուռիական»-խուռիական Թեյշեբա-Թեշուր և Շիվինի-Շիմեգի աստվածներին ու պաշտեն դրանց։ Ինչ է, իրենց աստվածները շոմեի՞ն։ Իսկ եթե իսկապես ընդունել են (մշակութային հարաբերություններում նման դեպքեր լինում են), ապա ո՞ւր են դրանց հետքերը հայկական պանթեոնում։ Չկան։ Պատկերը գրեթե նույնն է, ինչ որ նյութական մշակույթի բնագավառում։

Անցնենք Խալդիին։ Ահա թե ինչ ենք կարդում նրա մասին (ընդգծումները Ու. Իշխանյանինն են)։ «Հայկի անունը նորիսուռիներն սեպագրերում Հալդի և Խալդի ձևերն ունի։ Դրանց բառավերջի ի-ն քերականական վերջավորություն է, այն հանած, մնում են Հալդ և Խալդ ձևերը, որոնցում արմատ են Հալ-ը և Խալ-ը։ Հայոց բարբառներում էլ այդ անունը երկու ձև ունի՝ Հայլ և Խայլ, որոնցում արմատ են Հայ-ը և Խայ-ը։ Հայտնի է, որ հայերենում լ և յ հնչյունները միմյանց փոխարինում են։ Օրինակ, հայոց բարբառների մի մասում (և գրական լեզվում) ասվում է գալ, գալիս եմ, իսկ որոշ բարբառներում կայ, կայիս եմ։ Ուրեմն հայ արմատը կարող էր փոխարինվել հալ-ի կամ հակառակը։ Այդպես Հայ-ը դարձել է Հալ, Խայ-ը՝ Խալ» (նույն տեղում, էջ 50)։

Թող թույլ տրվի ինձ, մեկնաբանության փոխարեն, լեզվաբան Ու. Իշխանյանի նվաճումներով զինված, նույնացման մի նոր փորձ անել։ Բա չե՞ք իմացել, որ Իվանը նույն Երվանդն է։ Հապա՞։ Բառավերջի դ-ն արմատին չի պատկանում, ինչպես Խալդիի դ-ն։ Ե-ն և ի-ն հայերենում իրար փոխարինում են, օրինակ՝ երեկո-իրեկուն։ Բ-ն էլ ընկնում է, ինչպես, օրինակ, ընկել է, ըստ Ու. Իշխանյանի, Արարմ անվան միջից, որն այդպիսով դարձել է Արամ (նույն տեղում, էջ 52)։ Այսպիսով, Երվանդը դարձավ Իվան։

Եթե ընթերցողը կարծում է, թե միայն Հայկն ու Խալդին են այսպիսի կենդանահերձության ենթարկվել, ապա սխալվում է։ Ահա. «Սեպագրերում

Մենուայի անունը որոշ գիտնականներ կարող են Մինուա: Այս անունը, ինչպես էլ ընթերցվի, ծագել է բնիկ հայերեն մե(ն) կամ սրա տարբերակ մի(ն) բառից, որ նշանակել է մեկը, միակը, նաև՝ միայնակը» (նույն տեղում, էջ 61):

Նախ, այդ իմաստն ունեցող անուն լինել չի կարող, քանզի երջանիկ ծնողները չէին կարող իմանալ, որ նորածինը միակը պիտի լինի, ապա և բաց է մնում — առաջին վերջավորությունը: Ուստի առաջարկում եմ մի այլ, նման թերութուններից զուրկ, աստուգաբանություն, այն է՝ «Մի՛ նվա» (Ռ. Իշխանյանի նախասիրած հին ուղղագրությամբ՝ «Մի՛ նուա»), որ կամ նշանակում է «հաստատ եղիր», և ի՞նչ վատ անուն է արթայազնի համար, կամ էլ մանկիկը շատ լալկան է եղել: Դեմքիս լուրջ արտահայտություն տալով ավելացնում եմ. 1. մի ժխտական մասնիկը բնիկ հայերեն է (ի դեպ, այդպես էլ կա): 2. Հնում անունները հաճախ նախադասություն էին պարունակում (որ և իսկապես այդպես է. օրինակ՝ Նաբուխոդոնոսոր, արքադերեն՝ Նաբու-կուդուր-ուծուր, նշանակում է «նաբու (աստվածը) սահմանը պաշտպանեց»):

Հոր՝ Մենուայի ճակատագրից չի խուսափել և որդին՝ Արգիշտին: Ահա՛ «Առա անվան արմատն է Ար-ը, ա-ն հայոց հին հոլովական վերջավորություն է: Արգիշտի անվան արմատն էլ Ար-ն է, գիշտ-ը նորխուրական ածանց է: Ի-ն՝ վերջավորություն... Արգիշտի-ն Առա անվան ալաճություն է...» (էջ 68): Այստեղ հեղինակը իր առաջին, հուսանք նաև, որ վերջին «ներդրումն» է արել «նորխուրականության» — ուրարտագիտության մեջ. ներմուծելով «գիշտ» գոյություն չունեցող ածանցը: Արգիշտիի թոռան հետ նա նույնպես բարբարոսաբար է վարվել, նրա Ռուսա(ասորական ձևով՝ Ուրսա) անունը ձևափոխել Ռուշա-ի, նույնիսկ՝ Հոռշա-ի:

Քանի որ արդեն բունեցինք այս ճամփան, հիշատակենք ևս մի երկու, լեզվաբանության մեջ ժողովրդական կամ «կեղծ» անվանվող, ստուգաբանության նմուշներ, որոնք շատ են նմանվում փոքրուց հիշողության մեջ մնացած Սարգարաբադ (որ այժմ կիսահայացված ձևով գրում են Սարգարապատ), այսինքն՝ Սարգար-աբադ տեղանվան աստուգաբանությունը, որը մենք պատկերներով էինք արտահայտում, այն է՝ սար-դար-ա-րադ: Այս մակարդակի վրա են, օրինակ, լեզվաբան Ռ. Իշխանյանի առաջարկած Այդունի (ասուր. Այադու)՝ «Հայոց տուն», Արգիշտի՝ «Այր-դի (աստված)»-նի (ածանց)՝ կամ Մադակինա՝ «մատ» և «գին» (իսկ ինչու ոչ՝ «մոտ» և «կին» կամ «մատակ» և «գինա» (ածանց)) աստուգաբանությունները: Ոչ մի շափանիշ, բացի բառերի հնչունական արտաքին նմանությունից:

Հնդհանրապես պետք է ասել, որ, անկախ Ռ. Իշխանյանի արտադրած այս գոհարներից, կեղծ կամ ժողովրդական աստուգաբանության համաճարակը պատել է մեր շատ գրագետներին: Դրանք սկսել են նաև «մոգեռնացիներ» իրենց փորձերը, գիտականակերպ, լատինատառ, ապաթարցներով ու շեշտերով, կետերով ու աստղանիշներով ազուցված տեսք տալ, որից սարսուռ է իջնում վրադ:

Բայց մենք հեռացանք մեր բուն նյութից, որն էր ուրարտական հոգևոր մշակութիւնը, հատկապես՝ խաղիկ: Որ խաղիկն հնարավոր չէ մերկապարանոց ձևով Հայկ կարդալ, դա կասկածից դուրս է: Բայց որ ուրարտական և հայկական հոգևոր մշակութիւնների մեջ ևս, գուցե և ավելի, քան նյութականի մեջ, ստեղծվել են աղբյուրներ, որի լավագույն վկայությունը առկա լեզվական ընդհանրությունների շերտն է, դա ևս կասկածից վեր է: Օրինակ, քանի որ հայ առասպելաբանության մեջ կա Ասորեստանի հետ տիտանական պայքարի ոգով տոգորված նշանակալի շերտ, ապա այստեղ կարելի է որոնել նման աղբյուրներ: Այս իմաստով ուրարտական աստված խաղիկ կերպարը կարող է միախառնված լինել հայկական հերոս-աստված Հայկի կերպարանքին:

4. Պատմական ընթացքը: Հարազատ մնալով ամեն ինչ գլխավոր ներկայացնելու իրենց գործելակերպին, արագագիր հեղինակները մեր ժողովրդի ստեղծած սքանչելի առասպելները վեր են ածում տափակ պատմական դրո-

վազենք: Տեսեք, ինչ են գրում. «...հորենացին պատմում է, որ Թորգոմի որդի Հայկը իր գերդաստանով ու զորքով մի ժամանակ բնակվել է Միջագետքում Բաբելոնի մոտերքում: Սա ճիշտ պետք է լինի, քանի որ, նախ ինչպես վկայում են որոշ սեպագիր արձանագրություններ և այլ աղբյուրներ, Միջագետքում միշտ եղել է հայկական բնակչություն: Ապա՝ Հայկն իր զորքով հավանաբար զինվորական ծառայության մեջ է եղել Միջագետքում... Բայց Հայկն իր զորաբանակով, ինչպես հորենացին է գրում, ապստամբել է Միջագետքի տիրակալ Բելի դեմ և իր զորքով ու գերդաստանով վերադարձել իր պապերի երկիրը» (նույն տեղում, էջ 49):

Մովսես հորենացու պատմածի՝ մանուկների համար արված այս «փոխադրությունը» լիովին աղավաղում է պատմահոր շարադրանքը և, ինչպես կտեսնենք, աղավաղումները միտումնավոր են: Լսենք պատմահորը: «Որին (Բելին—Գ. Ս.) Հայկը չկամենալով հնազանդել, Բաբելոնում Արամայակ որդուն ծնելուց հետո, չվեց զնաց Արարադի երկիրը, որ գտնվում էր հյուսիսային կողմերում, իր որդիներով, դուստրերով և որդիների որդիներով, որ զորավոր մարդիկ էին, թվով մոտ երեք հարյուր հոգի, և ուրիշ ընդոծիններով, իրան հարած եկվորներով և բոլոր տունուտեղով» (I, 7):

Նախ, ո՞ր է այստեղ Հայկի «զորքը», նույնիսկ՝ «զորաբանակը»: Հայկը, ըստ պատմահոր, մեծ տոհմի վեհ նահապետ է, իսկ ըստ Ռ. Իշխանյանի՝ վարձկան գեներալ: Այս է Հայկին առասպելական հերոսից պատմական գործիչ դարձնելու գինը: Երկրորդ, որ ավելի կարևոր է, Մովսես հորենացու «Պատմության» մեջ ընդհանրապես խոսք չկա այն մասին, թե Հայկը «վերադարձել է իր պապերի երկիրը», և ոչ միայն չկա, այլ այս պնդումը տրամադորեն հակասում է պատմահոր առանցքադափարին (կոնցեպցիային), ըստ որի Հաբեթյանների, այսինքն՝ Հայկի պապերի տոհմից Հայկը առաջինն է, որ ոտք է դրել լեռնաշխարհ: Նրանից առաջ այն, ըստ Մովսես հորենացու, այցելել են ոչ թե նրա նախնիները՝ Թորգոմը, Թիրասը, Գամբը կամ ինքը՝ Հաբեթը, այլ Նոյի մյուս որդի Սեմը՝ իր որդի Տարբանի հետ, որոնց հետնորդներին էլ Հայկը հանդիպում է լեռնաշխարհի տարբեր վայրերում:

Հայերի կարծեցյալ «եկվորությունից» փախչելու մարմաշը, ահա, Ռ. Իշխանյանին հասցրել է պատմահոր գրածի այս միտումնավոր աղավաղմանը, այսինքն՝ կեղծելուն, և պարզապես անհեթեթության, քանի որ նա դրանով «Հարք» տեղանվան խորենացիական ստուգաբանությունը («Հարք, այսինքն թե այստեղ բնակվողները հայրեր են Թորգոմի տան սերնդի») ծուռ մեկնաբանելով, բռնազրոսիկ կերպով հակադրել է հորենացու իսկ վերը նշված առանցքադափարին:

Մյուսները էլ ավելի հեռուն են գնում առասպելների «պատմականացման» գործում, ինչպես, օրինակ, Լ. Միրիջանյանը, որը հաստատակամորեն բնակեցնում է Հայկին մ. թ. ա. 2500 թ. և հայտարարում, թե «Հայկը և նրա տոհմի բոլոր, ներկայացուցիչները... եղել են իրական-պատմական անձնավորություններ» («Պատմության և առասպելի սահմանները», Երևան, 1986, էջ 105):

Դրությունը մի կերպ շտկելու համար Ռ. Իշխանյանը ասում է. «Հայկը ժամանակներ հետո հայ ժողովրդի մեջ աստվածացվեց: Շատ հնում հաճախ էին ցեղապետներն աստվածացվում: Օրինակ, Բաբելոնում էլ աստվածացվեց նրանց զորավար Բելը» (էջ 50): Ուրեմն, հեղինակը փորձում է Հայկի համար իր հարթած արահետով քարշ տալ նաև Բելին: Սակայն պետք է ասել, որ Բելի այս «օրինակը» անօրինակ հերյուրանք է աքաղական առասպելաբանության և դիցաբանության նկատմամբ, որոնք, սակայն, բավարար չափով զրահավորված են հազարավոր աղբյուրներով, որպեսզի այստեղ անհրաժեշտ լիներ չափավորել Ռ. Իշխանյանին:

Մի գոհիկ «պատմություն» էլ կառուցվել է Արա Գեղեցիկի և Շամիրամի ընտրելագույն առասպելի վրա: Այդտեղ Արան հանդես է գալիս որպես թագավոր Արգիշտի I-ը (տե՛ս նաև վերը), բայց պարզվում է, որ «Արայի

(Առոհշտիկ) թագավորության ժամանակ Շամիրամը կամ կենդանի չէր, կամ շատ ծերացած էր» (էջ 62): Խեղճ Արա և Խեղճ Շամիրամ... Դե, իհարկե, Արան ժամանակներ հետո նույնպես աստվածացվել է:

Բացի այդ, Արայի կապակցությամբ ևս Ռ. Իշխանյանը կոպտորեն ներ-խուժել է խորհնացու պատմական առանցքազաղափարի (կոնցենպցիայի) մեջ, պնդելով, թե ըստ նրա հաղորդած զրույցի Արա Գեղեցիկը Հայոց թագավոր է եղել: Ըստ պատմահոր, հայոց առաջին թագավորը եղել է Արայից 30 սե-րունդ ուշ ապրած Պարույրը՝ Սկայորգու որդին, որի կապակցությամբ նա գրում է. «Ահա այժմ ես զվարճանում եմ՝ ոչ փոքր ուրախություն զգալով, որ հասնում եմ այն տեղը, երբ մեր բնիկ նախնիի (Հայկի—Գ. Ս.) սերունդ-ները թագավորության աստիճանի են հասնում» (I, 21):

Երևի թե մեր արագագիր հեղինակները գլխի չեն ընկնում, թե իրենց ձեռնարկած այս «առասպելաթափության» ինչպիսի հարված են հասցնում հայ մշակույթին: Հերավի, «շահելով» մի քանի անհավաստի պատմական դրվագներ, նրանք այդ գնով զրկում են մեր ժողովուրդը իր հնագույն առաս-պելաբանությունից, որը, այո, արտահայտում է պատմական եղելություննե-րը, բայց ոչ այդպես տափակ ու մերկապարանոց, ինչպես նրանք անգիտա-բար կարծում են: Առասպելաբանությունը, դիցաբանությունը յուրաքանչյուր ժողովուրդի գեղարվեստական ստեղծագործության զարդն ու պարծանքն են և վկայում են տվյալ ժողովուրդի մտավոր արարչական կարողությունների մա-սին: Եվ ահա, ստացվում է, որ պարսիկները, վրացիները, արաբները, հույ-ները, գերմանացիները ունեն այդ կարողությունները, իսկ հայերը՝ ոչ: Կար-ծում եմ շարունակելն ավելորդ է:

Առաջ անցնենք: Եթե արագագիր հեղինակները մի կողմից առասպելա-բանությունը վերածում են կեղծ պատմության, ապա, մյուս կողմից, նրանք պատմությունը վերածում են առասպելաբանության, պարզապես հեքիաթի: Անցյալում հանդիպում էինք լուսանկարիչների՝ զինված մեծ, նկարազարդ պատաստներով, որոնց վրա դեմքերի փոխարեն բացվածքներ էին: Հրապուր-ված մանուկները (մեծերն էլ) մտցնում էին գուլիները դրանց մեջ և հավեր-ժացնում իրենց, ասենք, որպես հեծյալ կտրիճների: Ահա մեր արագագիրների պատմություն շարադրելու հիմնական մեթոդը: Նրանք մանրամասնորեն արտագրում են, իհարկե, անխուսափելի սխալներով ու թյուրիմացություն-ներով, իրենց իսկ կողմից մեծ մասամբ անվանարկվող մասնագետների (Գր. Ղափանցյան, Ն. Ադոնց, Բ. Պիոտրովսկի, Գ. Մելիքիշվիլի, Ի. Դյակո-նով, Ն. Հարությունյան, Մ. Իսրայելյան, Գ. Տիրացյան և ուրիշները, Գյուտ-ցե, Ֆրիդրիխ, Սալվինի և այլք) ջանքերով վեր հանած պատմությունը, ար-տատպում չարքաշ աշխատանքով պեղած ու հետազոտած նյութական գան-ձերը և փոփոխելով գործիչների, աստվածների, ջեղերի, ժողովուրդների, քա-ղաքների ու երկրների իրական կերպարանքներն ու անվանումները, ստեղ-ծում... «Պատկերազարդ պատմություն հայոց»: Չեն վարանում նույնիսկ ներմուծել այդ փոփոխությունները աղբյուրներից բառացի, չակերտների մեջ առնված, մեջբերումներում (օրինակ՝ «Խալդի աստծու մեծությամբ Արգիշ-տին, Ռուսայի որդին...»-ը փոխարինելով «Հայկ աստծու մեծությամբ Արան, Ռուշայի որդին...»-ով), միտում ունենալով այդ ձևով ավելի դյուրին սրսկել իրենց կեղծիքը մանուկների արյան մեջ:

Օրինակները վերը մասամբ բերված են, կարելի է դրանք լրացնել ու բազմապատկել, քանի որ ողջ գիրքը այդ սկզբունքով է շարադրված: Բայց երևի ավելի նպատակահարմար է մի քանի նմուշներով ծանոթացնել ընթեր-ցողին նաև այլ տիպի, այն է՝ շփոթարված, անգիտությունից եկող սայթա-քումներին:

Ցուցադրելով իր գիտելիքները «նորխուռիագիտության» բնագավառում, Ռ. Իշխանյանը 46-րդ էջում բերում է 4 բառից բաղկացած մի սեպագրական հասկած, նրա տառադարձումը և թարգմանությունը: Նպատակն է ցույց տալ, որ «նորխուռիներն» (ուրարտերեն) այս նախադասության մեջ բոլոր բառե-

րը հայկական են, այսինքն՝ փոխառություններ են հայերենից: Այս կարճ հատվածում՝ ա) սխալ է արտանկարված վերջին սեպագրական նշանը, բ) սխալ է տառադարձված երրորդ սեպագրական նշանը, գ) սխալ է իեշե-ես նույնացումը, որովհետև իսկական խուռիերենը ևս ուներ այդ դերանվան իգա ձևը, դ) սխալ է ինի—այս նույնացումը (նույնացման փորձ կատարելու համար պիտի լիներ առնվազն իսի), ե) ճիշտ է պիլի—պեղել նույնացումը, բայց այն էլ փոխառված է Գր. Ղափանցյանից, զ) ագ— արմատը բնիկ հայկական չէ, հայերենում նրան համապատասխանում է ած— արմատը: Հինգ սխալ՝ չորս բառի մեջ, այսպիսին է լեզվաբանի նվաճումների հանրազանմարը «նորխուռիերենի» բնագավառում:

Անցնելով աքքադերենին լեզվաբանը գրում է. «Աքքադերենի ասուրական տարբերակի Ուրարտուն բաբելական տարբերակում Ուրաշտու ձևն ունի, քանի որ ասուրականի Ե հնչյունի դիմաց բաբելականը շ ուներ» (էջ 41): Լսել է, բայց չի հասկացել: Եթե այդպես լիներ, ապա ասուրական տարբերակի Ուրարտուն բաբելական տարբերակում կլիներ Ուշաշտու: Իրականում ասուրական տարբերակի (բարբառի) Ե-ն բաբելականում շ է դառնում միայն ատամնային հնչյունից առաջ:

Չի շրջանցվում և խեթերենը: Հայաստ անվան կապակցությամբ 29-րդ էջում գրված է. «Խեթերեն հոգնակիի մասնիկ էին սա-ն և աւա-ն»: Ճիշտ չէ, խեթերեն հոգնակիի այդպիսի մասնիկներ չկան:

Պատմության խնդիրներում ևս չեն պակասում «նորությունները»: Այսպես, իմանում ենք Ասարխադդոն անունը կրած ասուրական առնվազն 8 արքաների մասին, երբ 40-րդ էջում կարդում ենք. «Ասորեստանի Ասարհադդոն 8-րդ թագավորը մ. թ. ա. 680 թ....», մինչդեռ այդ անունով միայն մեկ թագավոր է եղել: Կասեն՝ վրիպակներից է կաշում: Բայց սա վրիպակ չէ, քանի որ 86-րդ էջում կրկին անգամ շփվում ենք «Ասորեստանի նորընծա այս թագավորի՝ Ասարհադդոն VIII-ի հետ», այս անգամ, ի հաստատումն նախորդի, հոռմեական թվանշանով օժտված վիճակում:

Մի վերջին դրվագ էլ՝ պատմական աշխարհագրությունից. «Մենուայի ժամանակ հայոց Արցախը գտնվում էր Ասորեստանի թագավոր Ագադներարի III-ի իշխանության տակ: Նա այստեղ իր պալատն ուներ» (էջ 72): Պետք է ասել, որ Ասորեստանի ոչ մի թագավոր երբեք չի հասել Արցախի կողմերը, ևս առավել այնտեղ պալատ չի կառուցել: Նման պատմություններ հորինելիս գոնե պետք է նայել քարտեզին: Արցախ հասնելու համար Ադադներարի III-ի ժամանակ թույլ Ասորեստանի թագավորը պիտի կտրեր-անցներ հզոր Մենուայի հզոր թագավորությունը (տե՛ս թեկուզ նույն գրքի 61—67 էջերը): Սա պակաս անհեթեթ չէ, քան երբ մեր օրերում ոմանք առանց քարտեզի վրա հայացք ձգելու խոսում են Հայաստանի կողմից Ադրբեջանի շրջափակման մասին:

Այսպիսի սայթաքումները գուցե բնական են բազմազբաղ հազարամիջ-շակ մի հեղինակի համար, ուստի և չենք ընդարձակում դրանց շարանը, բայց մի ուրիշ երևույթի կողքից անցնել չի կարելի: Հասկանալի է, որ մանուկներին հասցնագրված գրքում տողատակ վկայակոչումներ կարող են չլինել և այստեղ էլ գրեթե չկան: Բայց ահա, 46-րդ էջում, հղումներ են արված հեղինակի երկու հոդվածներին: Խոսքը հայ-ուրարտական (ներողություն, նորխուռիական), լեզվական ընդհանրությունների մասին է: Բերված են օրինակներ, այդ թվում ծառ-ծառի, ավելի-աբիլի, սուր-շուրի, ապա և պեղել, արծիվ, ուղի, ուղտ, բուրգ, բառերը, որոնք ևս իրենց զուգահեռներն ունեն ուրարտերենում: Նույն էջում բերվում են հատուկ անունների զուգահեռներ. Ծրեվան-էրեբունի, Վան-Բիաին(ա), Մոփք-Մուփանի: Ուրիշ տեղ բերվում են այլ զուգահեռներ. Դարույնք-Տարիունի, Գառնի-Գառնիանի (պետք է լինի Գիառնիանի), Աբեղյանք-Աբիլիանի, Տովարածատափ (պետք է լինի Տուարածատափ)-Տուարածի (պետք է լինի Տուարածինեի)-խուրի:

Վերոհիշյալ հղումները Ռ. Իշխանյանի հոդվածներին, քանի որ ուրիշ հղումներ չկան, այնպիսի տպավորություն են ստեղծում, թե այս զուգահեռների հայտնաբերման վաստակը իրենն է, այնինչ դրանք մասնագետ-ուրարտագետների երկարամյա ջանքերի արդյունք են, իսկ իրեն պատկանում է միայն ուրարտերենը «նորխուրեբեն» վերանվանողի կասկածելի փառքը: Թե ինչպե՞ս որակել այս երևույթը, թող որոշի ընթերցողը: Մի խոսքով, «թագավորը մերկ է», պարոնայք:

Ամփոփենք: Որքան էլ անսպասելի լինի ընթերցողի, մանավանդ, իրենց՝ արագագիր հեղինակների համար, բայց և այնպես պետք է ասել, որ հայագիտության ողջ պատմության ընթացքում նախադեպ չունեցող նրանց գործելակերպը որոշ իմաստով ժառանգված է մեր երկրի պատմության խորհրդային շրջանը «լուսաբանող» պատմագրությունից: Ժառանգված է, իհարկե, ոչ թե դրդապատճառների ու մղումների առումով, այլ մեթոդների: Ինչպես հայտնի է, խորհրդային և դրան հարող շրջանների պատմության մեջ մասնագիտացած պատմաբանների մի սովոր խավ տասնամյակների ընթացքում վերածել է այդ պատմությունը արհեստական մի էպոսի: Դրա առանձին դրվագները կարելի է անվանել, օրինակ, «Ասք կոլեկտիվացման մասին», «Ասք ժողովուրդների մեծ առաջնորդի մասին» և այլն: Այսպես սերմանվել ու արմատավորվել է պատմական փաստերի անտեսման, այլափոխման, սվաղման, հորինման քույլատրելիության բարոյագութի մտայնությունը, որը այսօր էլ շարունակում է տալ իր պտուղները տարբեր պատմաբանագավառներում և քարուքանդ անել պատմությունը որպես գիտություն: Ահա թե ինչի է ուաջը պիտի ս՝ռնենք: